

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 25

1898 ՕԳՈՍՏՈՍ 22

Ամեն Տեղի համար Տարեկան կանխիկ 50 դանեկան, Վեցամսեայ 26 իսկ եռամսեայ, 13 դանեկան : Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 Ֆրանկ : Թղթատարի ծախսը տնօրէնութեան կը վերաբերի : Հասը 40 փարայ : Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունի 100 դրուէի տեղ 105 դրուէ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԴԱՐՑ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՎԵՀ. ԿԱՅՍԵՐ.

Մ. ՄԱԼԱՔԵԱՆ Երկրագործութիւն Տես. եւ Դործնական :

Ղ. ԲՈՒԱՏ. Պարտիզպանական Կենդանաբանութիւն :

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Վերջնականապէս :

ՏԲ. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ. Մանրէաբանութիւն Մեկ Դասէն :

Ղ. ԲՈՒԱՏ. Թէյի մշակութիւնը եւ պատրաստութեան եղանակը :

ՏԱՆՏԻԿԻՆԸ Խոհանոցի Բաժին

ԱԶԴԱՅԻՆ, ՆՆՐՔԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐՆՐ

Տ. ՊՕՉԱՃԵԱՆ. Գիտական խնդիրներ

Բառարան. — Թղթակցութիւնք. — Հանելուկ. — Ազդ :

Հատը 40 փարայ

Կ. ՊՈՒԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Ա. ՆՕՄԻՉՄԱԹԻՏԻՍ

Ջամադար Եօրուտ, Ջիւմայիլի խան Վարի յաւկ

ՁԲՕՍԱՆՔ

ՀԱՆՆԱԼՈՒԿ ԹԻՒ 16

Պապուդ պապերն ալ զիս ճանչցան
Եւ միշտ ինձ հետ ընկերացան.
Ձիս ամեն օր կը յարգեիս,
Բայց միշտ մութը կը պահեիս.

Ոսկե թռնեցիս դարձուցիս,
Անշունչ մարմնոյս հոգի տուիս,
Դո՛հ չմնալով գիտեսցիս,
Վերջին հրամանս ալ առիս.
Ճանչցա՛ր զիս թե ո՞վ եմ ես,
Մի՛ շուարիտ պիտի գտնես:

Պ. ԴՈՒՅՈՒՄՅԱՆ

ՆՈՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

❦❦❦❦❦

Կտեցի՞ր յոյսդ Բժիշկէն, դիմէ Քա-
հանային կ'ըսէ առածը Հային:

Մայր-եկեղեցւոյ փողոցը քահանային
դիմելէ առաջ բժիշկ մը կայ, Տօբթ. Ս.
Թէրզեան որ ամեն տեսակ հիւանդու-
թիւնները կը դարմանէ և դժուար կը
դրկէ իրեն դիմողները քահանային.
ճարտար է արուեստի մէջ և երկար տա-
րիներ գաւառները իր արուեստը դորձ
դրած է օգտակար կերպով:

ՍՊԱՌԵՑԱԻ, ԳԻՆԸ ՍՈՒՂՑԱԻ, 20 ՂՐՇ.
է հիմա խօսքերը ջուրը ինկաւ, որով-
հ ետեւ՝

ՏՕՆԱԿԱՐԳԸ

հրատարակուեցաւ:

Եկեղեցւոյ պաշտօնեաները՝ դպիր-
ները ու երգեցիկ մանուկները ածն օրերը
պիտի շնորհուն, ամենուն ալ դահայում:

տուած է, և երգեր ու ճարականներ ալ
աւելցած է, այս տպագրութեան մէջ,
Գինը 12 ղրշ. կեդրոնատեղին է Պէր-
պէրեան Տպարանը. կը գտնուի բոլոր
գրավաճառայ քով:

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՁՈՒ

ԿԱՄ

ՎԱՐԺ ՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՐԻ

ԳԻՆ 4 ՂՐՇ.

Ո՛րչափ պիտանի, դիւրուսոյց, ա՛յնքան
անծանօթ մնացած գիրք մ'է:

Դրութիւնն է Անգլիական. հետեւողը
Գ. Եպիսկոպոս Այվազովսքի. հրատարակողն
է, Վահրամ Յ. Մարգարեան:

Բայց կ'երեւի թէ՛ Մայր լեզուն է միայն
որ մեր հին պատուելիները չեն ուզեր աւան-
դել նոր դրութեամբ:


ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մեր խորին շնորհակալութիւնք կը
յայտենեմք ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻՆ, որոյ մի-
ջոցաւ ունեցանք սա օգուտը, ո՛չ օ-
գուտները:

Ա. Դիւրութիւն եւ մաքրութիւն
լամպարները պատրաստելու:

Բ. Քարիւղի նուազ սպառում եւ
առաւ լոյս ելեֆտական:


ԳԻՆ 50 ՓՐՅ. 2 ՂՐՇ. 3 ՂՐՇ.



22^{րդ} ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՕԳ. ՄՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ.

Վեհափառ Կայսեր Թուրքիոյ



Երկիրն համօրէն՝ քի Մայրաքաղաքին քի Նահանգաց մէջ, խանդավառ ցնծանօք ու արտասովոր ոգեւորումով տօնեց իւր հանճարեղ Վեհապետին Գահասօնը, որոյ մէն մի տարեդարձն կը կազմէ Թուրքիոյ Քաղաքակրթութեան Նոր Տարեդարձը:

Օսմանեան Նախարար եւ Բարձրասիան բոլոր Պատեօնասարք հաւասար խանդավառութեամբ շնորհաւորեցին զԱյն. ինչպէս նաեւ օսար Ազգաց Վեհապետք ու Ներկայացուցիչք:

Շնորհիւ մեր յուսամիտ Վեհ. Սուլթանին, դպրութիւնները, գիտութիւնները եւ արհեստները աւելի զարգացած են, եւ նորանոր բռնիչներ առած են իւր օրով: Այսպէս Վեհ. Սուլթան Համիտ Բ. Պահակալութիւնը Թուրքիոյ վերածնութիւնը եւ բոլոր Օսմանեան հպասակներու բարօրութեան նոր դարաշրջան մը կը բացայ Օսմ. պատմութեան էջերուն մէջ:

Հայ ազգն՝ որ Յաղթական Ֆարսիէն սկսեալ հպասակային առանձնաւորութիւններ վայելած է միշտ Օսմ. աշխարհածաւալ Պետութեան, միշտ վայելած է մեծահոգի Սուլթանաց բարիքները, եւ իւր գոյութիւնը կրցած է պահել, ցայսօր Անոր հզօր հովանաւորութեան տակ, միշտ հաւասարմօտէն ծառայելով:

Համայն Թուրքիոյ ժողովուրդը գոհ եւ ուրախ արժով այսօր կը տօնէ իւր Սիրելի Վեհապետին Պահակալութեան Տարեդարձը, ամէն կողմ շքեղ լուսավառութիւններով եւ հրախաղութիւններով, եւ ամէն ուր վասն Արեւատութեան ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՄԵՐ գոհաբանական աղօթքներ կը մատուցանէ:

Ա. Պ. Ի., ՇԱՏ Ա. Պ. Ի.

ԹՈՒՐԿԻՈՅ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՎԵՂԱՊԵՏՆ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ.



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

—

Բ.

ԵՐԵՒՈՒՄՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Լաւ մեակուած հոգը միայն ցորեն յառաջ չ'ընէր, այլ ամբողջ փաղակերթութիւնը:

ԼԱՄԱՌԹԻՆ

Երկրագործութեան պատմութիւնը ընել ըսել է մարդկութեան պատմութիւնը ընել: Հին ժամանակները, բոլոր ընկերութեանց հաստատութենէ առաջ երկրագործութիւնը անձանօթ էր: Եթէ կ'ուզէք վայրկեան մի Զեզ հետ դիտենք ժամանակին մութ վարագոյրին ետեւէն հին ատենուան Երկրիս վիճակը, երեւակայեցէք վայրենի երկիր մը ծածկուած ընդարձակ եւ խիտ անտառներով,

ասդին անդին կը գտնուին մեծ ճահիճներ. դաշտերուն մէջէն կը վազեն, կ'անցնին կ'երթան ոլոր մոլոր, լայն եւ խոր գետեր, չ'կան հոն ո'չ մշակութիւն եւ ո'չ աշխատութիւն, ո'չ գիւղեր եւ ո'չ աւտուներ: Երբեմն երբեմն կը լսուին անտառին մէջէն գայլերու ոռնումը, կամ վիթխարի կենդանիի մը դանդաղ քայլերը որ կ'անցնի կ'երթայ կոտորտելով ծառերու ճիւղերը, պիտի հարցնէք կարելի է թէ արդեօք հոգ մարդ չ'կայ. — այո՛ կայ, բայց մարդը չ'տարբերիր վայրենի կենդանիներէ որ զինքն կը շրջապատեն. իբր ապաստանարան ոչնի քարայրները, ժայռերու ստորոտը բացուած խոռոչները, իբրեւ հագուստ՝ տերեւներ եւ կամ կենդանիներու մորթեր. կամ որսորդ է եւ կամ ձկնորս, կը թափառի անտառէ անտառ, ժայռէ ժայռ. իւր ապրուստը կը փնտռէ ուր որ կարելի է գտնալ կուռելով շատ անգամ վայրենի կենդանիներու հետ սրունք դայն կը շրջապատեն եւ իւր թշնամիներն էին: Սակայն մարդը բաղդատմամբ մտաւորական կարողութեան ամենէն զօրաւորն ըլլալով կ'սկսի շուրջը գլոս

նըող կենդանիներուն ամենէն խելացիներէն եւ լաւ կազմութիւն ունեցողներէն ոմանք ընտանեցնել, զանոնք վարել եւ պահպանել շունին հսկողութեամբ: որուն հաւատարմութեան վստահ էր: Այսպէս մեծ անշրպետէ մը կ'անցնի, թափառական կեանքը կը թողու հովիւ ըլլալու համար, կ'ընտանեցնէ ձին որ թէ մարդուն ամենօրեայ պէտքերուն կը ծառայէ եւ թէ պատերազմի ժամանակ: Մարդը կ'ընտրէ ու կը կրթէ եղբ որ երկրագործին համար կարեւոր օգնական մը կը դառնայ: Եգիպտացիները եզին մատուցած ծառայութեանց փոխարէն, իրենց աստուածներու մէջ կը դասակարգեն զայն: Վերջապէս ոչխարը, այծը եւ ուրիշ գետն շատեր ընդունեցան հարստութեան անսպառ աղբիւրներ կ'ըլլան իրենց այլ եւ այլ արտադրութիւններով:

Բայց մարդը գոհ չ'է իւր դիրքէն, կ'ուզէ աւելի երջանիկ ապրիլ, պարապ ժամերը կը գործածէ հիւսնի բոյսերէ հագուստներ շինելու, կը տաշէ փայտը ու քարը, կը շինէ քարէ կացիներ որոնցմով կը խուզարկէ հողը եւ կը հանէ մետաղներ՝ որոնք ծառայեցին նախնական երկրագործական գործիքներու շինութեանց, գործիքներ՝ որոնց մինչեւ այսօր կը հանդիպինք հողին խաւերուն մէջ:

Այսպէս մարդը կը մտնայ քաղաքակրթութեան ճանքուն մէջ եւ որչափ կը յառաջանայ այնքան իր պէտքերը կը չատնան:

Սակայն հագիւ դար մը կայ որ տարրագիտութեան շնորհիւ գիմիաբանները կրցան հողին տեսակները զանազանել, բոյսերուն բաղադրութիւնը եւ պէտքերը ճանչնալ, թէ ինչպէս պէտք է հողը պարարտացնել որպէս զի կարելի ըլլայ անկից ամենաշահաւոր կերպով օգտուիլ: Պէտք է աւելցնել նաեւ թէ այլեւայլ երկրագործական գործիքներու գիւտը եւ անոնց կատարելագործութիւնը երկրագործութեան նոր շրջան մը բացին, երկրագործին աշխատութիւնները աւելի խելացիութեամբ եւ իւր ապագան աւելի վստահելի վիճակի մը մէջ դրին խնայողութեամբ ժամանակի, ստակի եւ ըն:

Գ.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՕԳՏԱԿԱՐԾՈՒԹԻՒՆԸ

Երկրի մը մէջ ամէն ինչ կը ծաղկի,
եթէ երկրագործութիւնը ծաղկած է:
ՍԻԻԼԻ

Երկրագործութեան օգտակարութիւնը ցուցնելու համար հարկ կ'ա՞յ արդեօք երկար բարակ սիւնակներ լեցնել. առանց երկրագործութեան մարդս ապրելու համար կամ որսորդ պիտի ըլլար եւ կամ ձկնորս, քաղաքները պիտի զրկուէին իրենց զարդերէն: Անք մը նետեցէք ձեր շուրջը եւ ահա պիտի համոզուիք թէ երկրագործութիւնը օգտակար արուեստ մ'է. բոլոր ձեր հագուստները, տան վարագոյրները, գորգերը եւ այլն պատրաստուած են կամ բամպակէ կամ վուշէ (lin) եւ կամ բուրդէ: Երկրագործն է որ կ'արտադրէ ցորեն, հաճար, գետնախնձոր, տեսակ տեսակ բանջարեղէններ եւ ըն. որոնք մեր գլխաւոր սնունդները կը կազմեն, հողագործին արտադրած գարին, վարսակը, մարգագետիններու զանազան խոտերը կը սնուցանեն ընտանի կենդանիները, որոնք անձեով կամ միւս կուտան, կամ բուրդ, կամ աշխատութիւն, եւն:

Բացայայտապէս կը տեսնենք որ երկրագործութիւնը բոլոր արուեստներէ ամենէն կարեւորն է. նմանապէս ամենէն ազնիւն է, որովհետեւ երկրագործութիւնն է որ ամենէն շատ օգնեց ազգաց քաղաքակրթութեան: Պատմութիւնն մեզ կը ցուցնէ թէ այն ազգերը որոնք երկրագործութեամբ զբաղած են միշտ, զօրացած եւ զարգացած են. ընդհակառակը անկման դատապարտուած են այն ազգերը որոնք ամայացուցած են դաշտերը, ինչ որ կը բացատրէ Յոյներու, Հռովմայեցիներու եւ Սպանիացիներու փոփոխապէս մեծութիւնը եւ անկումը:

Ինչպէս հին ժամանակները՝ նոյնպէս ա՛յ այժմ ամէն երկիր ենթակայ է այս բնական օրէնքին առանց բացառութեան: Բայց ցաւօք կը դիտենք որ մեր մէջ երկրագործութիւնը թողուած է մինչեւ այսօր ռամիկին. տգէտին ձեռքը (բացառութիւնները կը յար-

գենք)։ Մեր քիչ ու չափ զարգացած երիտասարդները կը խորշին դաշտային աշխատութիւններէն, կը փախչին ամրան արեւու կիզիչ ճառագայթներէն եւ իրենց անտանելի կը թուի աղբերու հոտը առանց վայրկեան մը խորհելու թէ՛ առանց դաշտային աշխատութեանց քաղաքները պիտի զրկուէին իրենց luxetն, թէ՛ այդ անախորժ հոտով աղբն է որ կը ծառայէ հողը բարեբերելու առատ եւ ընտիր բերք ունենալու համար. ասոր պատճառը կրթութեան թերութիւնն է, ինչպէս առիթ ունեցած ենք Մասիս օրաթերթին մէջ աւելի ընդարձակօրէն պարզելու այս կարեւոր խնդիրը։ Երկրագործութեան ուսումը ծաւալելու համար այժմ կարծենք դժուար է վարժարան մը բանալ, բայց զոնէ կրնանք մեր նախնական եւ բարձրագոյն վարժարաններու մէջ հաստատել երկրագործական դասեր պատրաստելու համար երկրագործութիւնը սիրող եւ ճանչցող սերունդ մը որ ամէն կարգի զոհողութիւններ պիտի ընէ երկրագործութիւնը զարգացնելու համար բանալով երկրագործական վարժարան մը, քաջաբերելով երկրագործական հանդէսները (թերթ) եւլն։

Ծաւով ենք որ Ուսումնական Խորհուրդը նկատի պիտի առնէ այս մեր ըսածը ու բարեփոխումներ մտցնէ իր ծրագրին մէջ աւելի մեծ տեղ մը տալով երկրագործական ուսման մեր նախնական վարժարաններու մէջ։

(Շարունակելի)

Ռօսոսթօ

Մ. ՄԱԼԱՔԵԱՆ

ՊԱՐՏԻՋՊԱՆԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մրգաստաններու վնասակար միջոցները

ոչնչացնել

(Շար. Տես թիւ 28)

ԽճճՈՐԵՆՈՅ ծաղկաւերը (Anthonomus pomorum). — 5-6 հազ. մեխր. երկայնութիւն ունի. մարմինը մութ թը.

խազոյն, ծածկուած է դորշադոյն ալուամազերով. պատեաններուն ծայրը ճերմակ է։

Ապրիլ ամսոյ մէջ էգ ծաղկաւերը խնձորենիներուն ծաղկի կոկոնները կը ծակէ իր ցուկով, եւ իւրաքանչիւրին մէջ մէկ մէկ հաւկիթ կը զետեղէ։ Շարժէ մը ճերմակ ուրդ մը կը ծնի, որ անմիջապէս կ'սկսի կրծել ծաղկին սերնդագործիչ անդամները։ Երկու շաբաթէն որդը 6 հազ. մեխր. երկայնութիւն կ'ստանայ, եւ կ'ծիծի կը փոխուի նոյն իսկ ծաղկին մէջ, որ առանց բացուելու կը թարչամի եւ կը սեւանայ։

Ամիս մը վերջը կատարեալ միջատը դուրս կ'ելլայ եւ ամբողջ տարին թմրած վիճակի մը մէջ կ'անցունէ ծառին ճեղքումած կեղեւներուն եւ մամուռներուն (կօստուն) մէջ, որ հետեւեալ փշարան կազդուրելով, իր ցեղը արգասաւորելու կ'զբաղի։

Այս միջատէն քիչ չափ տարբերութեամբ ուրիշ մ'ալ, սե երկաթի գոյնով, պատեաններուն ²/₃ մասը ճերմակ, բողկուկները բաց սև, ոտքերը երկաթագոյն, իսկ փորը ամբողջովին ծածկուած է ճերմակ աղուամազերով, եւ կը կոչուի Տանձենիի ծաղկաւերը (Anthonomus pyri), մասնաւորապէս տանձենիի ծաղկները խաթարելուն համար, ճիշտ խնձորենիի ծաղկաւերին պէս, որուն ցեղակից ըլլալով, միենոյն բարբը եւ յատկութիւնները ունի։

Կորիզաւորներու ծաղկաւերը (Anthonomus druparum). — ¹/₂ հազ. մեխր. երկայնութեամբ, մարմինը թխագոյն. ծածկուած շիկագոյն մազերով, պատեաններուն վրայ բաց գոյնով շերտ մը, երկու վէտկոր բիծերով, բայց առանց մազի։ Այս ծաղկաւերը կ'ապրի մասնաւորապէս կեռասենիներու վրայ. բայց

երբ իր մասերը տանձենիներ ալ գտնէ, չ'մերժեր: Էգը կը ծակէ ծաղկանց կոկոնները, և իր ցեղակիցներուն պէս, մէյմէկ հաւկիթ կը զետեղէ անոնց մէջ: Իր կեանքը և սովորութիւնները ճիշտ անոնց պէս են: Ծառերուն վրայ սեցած և գետինը ինկած ծաղիկները ժողուելով և այրելով անոնց աճեցման առաջըը կ'առնուի: Թէև կը յանձնարարուի կարգ մը միջատասպան դեղեր, բայց միջատներուն արտաքին կազմակերպութեան պատճառաւ, շատ անգամ անոնք ազարդին կը մնան: Համեմատական 10^{րդ} թրւոյն մէջ արդէն կարգ մը միջատասպան դեղերու վրայ դրած ենք, զորս կարելի է փորձել:

Հետզհետէ պիտի ցուցնենք նաև ուրիշ միջոցներ, որոնք աւելի ազդեցութիւն ունին ուրիշ միջատներու վրայ, քան առանց թէև, բայց անոնց վրայ խօսած ատեննիս պիտի ըսենք թէ, որոնք են քիչ շատ այս պատենաթեմներուն վրայ ազդեցութիւն ունեցողները:

Տանձենիի սերեւակեր *Phyllobius pyri*). — 6 հազ. մեթր երկայն. մարմինը սև գոյնով, ծածկուած բաց կանաչագոյն թեփերով. ոտքերը և բողկուկները երկաթի ժանգաֆոյն: Կ'ապրի խնձորենիի և տանձենիի տերևները ուտելով:

Արծաթագոյն սերեւակեր (*Phyllobius argentatus*). — 5 հազ. մեթր երկայն. երկու տեսակ են. որոց մին, սև մարմինով, ծածկուած արծաթագոյն կանաչ թեփերով. իսկ միւսը կապոյտ կանաչագոյն թեփերով: Բողկուկները և ոտքերը դեղին: Անոնց մարմինն երկայնաձև և նեղ է. կ'ապրին տանձենիի և խնձորենիի տերևները ծակծկելով:

Երկայնաձև սերեւակեր (*Phyllobius oblongus*) — 6 հազ. մեթր. սև, դորձագոյն աղւաւմազով ծածկուած. լանջքը

սև. բողկուկները և ոտքերը չիկագոյն: Տանձենիի, խնձորենիի և կեռասենիի վրայ կ'ապրի տերևները կրծելով: Այս տերևակերները ապրիլի վերջերը սկսելով մինչև յուլիսի սկիզբները կ'երեւին: Ոչնչացնելու համար կը յանձնարարուի, առաւօտուն կանուխ ծառերը ցնցել, և ինկած միջատները սաւանի մը վրայ ժողուելով այրել:

Սալորենիի կեղեւակեացը (*Scolytus pruni*). — և հազ. մեթր. գլուխը և լանջքը սև. պատենաները չափանակագոյն: Էգը կը ծակէ տկարակազմ սալորենիի և խնձորենիի կեղեւները, երբեմն ալ տանձենիի. ներքուղիներ կը բանայ կեղեւին և փայտին մէջ, և հոն կ'ածէ իր հաւկիթները: Որդը՝ ծնած ատեն ճերմակ կ'ըլլայ, յետոյ թուխ գոյն մը կ'առնու, և այլակերպւածի ատեն ալ սեւագոյն կ'ըլլայ: Այլակերպումը մայիս ամսոյ մէջ կը կատարուի. տակաւին իրենց ներքուղիներէն դուրս չ'ելած: Կատարեալ միջատը յունիսին մէջ երեւան կ'ըլլայ. երբեմն ա՛յնչափ շատ կ'ըլլան ՚ր, ծառը կը չորցնեն:

Թզենիի կեղեւակեացը 1 1/2 հազ. մեթր, սև մարմինով, պղնձագոյն պատենաներով, կ'ապրի թզենիի ճիւղերուն փայտը կրծելով և փոշիի պէս վար թափելով:

Նոյնպէս ձիթենոյ կեղեւակեացը, 3 հազ. մեթր երկայն, մշտագոյն և աղւաւմազոտ մարմինով, պատենաները տանախան բլծերով պիտակուած և պղնձագոյն մազերով ծածկուած: Թըրթուրը ճերմակ և չըջանալիաձև կըրցած, չափահասը կ'երեւի ապրիլ և մայիս ամիսներուն մէջ, և կը տեղաւորի ձիթենիի ճիւղերուն մէջ: Միշտ տկար և աղազուն ծառերը կը նախընտրէ. այս պատճառաւ պէտք է միշտ ծառերը ա-

ռողջ վիճակի մէջ պահել, մշակութեան ընտիր եղանակներով. և այն ծառերուն ճիւղերը որ այս միջատներէն խաթարուած են, մարտի մէջ կտրել և պրել, որ կը ճանչցուին իրենց ստացած մանիշակագոյն և չիկագոյն սպիներով:

Վերջապէս կան տակաւին շատ մը պատենաթեւեր, որոնք այս կամ այն երկրի յատուկ են. բայց մենք միայն գլխաւոր տեսակներուն վրայ խօսելով, ընթերցողը կրնայ քիչ շատ նմանութեամբ բաղդատել և գտնել իր երկրի յատուկ եղածները:

Թէ ի՞նչ միջոցներ գործածելու է, ըստ կարելոյն այս վնասակար միջատներուն առաջքը առնելու համար, անցողակի բացատրենք, Եւրոպայի ծառաբոյծներու դրութիւններն մէջ բերելով:

Առ հասարակ Եւրոպայի ծառաբոյծները թող չեն տար որ իրենց միգաբեր ծառերը ըստ կամս բարձրանան և ընդարձակուին: Մրգաստանի մը մէջ խընամուած բոլոր ծառերը կարճ և ծայրատուած են, որոց ամենէն բարձրը հազիւ 3 մետրի կը հասնի, երբ բրգածեռ ոճով յօտեն (պոստաւագ): Այս դրութեան առաւելութիւնները խիստ շատ են. նախ՝ անոնց տուած պտուղները խոշոր և աղէկ կըլլան, գրեթէ առանց բացառութեան ամեն տարի չարունակաբար պտուղ կուտան. խնամելը գիւրին և պտղաքաղը առանց դժուարութեան կըլլայ, են:

(Շարունակելի)

2. FINIS

ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ

Անոնք որ կը փախափին շարունակաբար ստանալ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ, կը խնդ-

րդի իրենցմէ մէկ անգամի համար քաղ-փօսքաղով մը իմացնել մեզ, եւ անպատճառ քաժանորդագիրը հետ մէկտեղ դրկել, ապա թէ ոչ առանց քացառութեան, չ'պիտի դրկեն մեզի պատրաստեցողներուն: Նոյնպէս ՀԱՆՐԱԳԻՏԱԿ այսուհետեւ կանխիկ ըրչալով, վեցամսեայ քաժանեզին վճարողները պէտք է փութան երկրորդ վեցամսեի քաժանեզինը առաջուց մեզ դրկել, որպէս զի մենք ալ իրենց քերք դրկենք:

Նոր քաժանորդ գրուիլ ուզողները պէտք է կանխիկ վճարեն իրենց քաժանեզինը. ըրչալ եռամսեայ, վեցամսեայ կամ տարեկան:

Թերթիս քաժանորդագրութիւնը կը սկսի իւրաքանչիւր եռամսեակէն, այսինքն՝ Մարտ, Յունիս, Սեպտ. Դեկտ. ամսագրութիւններուն:

Այս առթիւ մեր քաղմաքիս ընթերցողաց եւ մասնաւորապէս Պօլսոյ Պատ. քաժանորդներու կ'ազդարարենք թէ, 3 շաբաթէ ի վեր մեր նոր գործակաւար Պ. Վարագդատ Քիւփեճեան հրաժարելով աչելս քերթիս հետ ո՛ր եւ յարաբերութիւն չ'ունի:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹԻՒՆՆ ՄԵԿ ԴԱՍԷՆ

Գիւտ եւ Անուանակոչութիւն Մանրեից. — Մանրէներն՝ 17, դարուն վերջերն՝ մանրացոյցի գիւտին շնորհիւ՝ Լէօփէն Հօէկ բնապատուէն տեսնուեցան, զոր այս հոլանտացի գիտունն, կենդանիներ (Ջրածնիներ) համարեց իրենց շարժման ազագու: 1864 ին Տըփէն առաջին անգամ բուսիկներ կարծեց զայն:

եւ ճօճակոնաց (Ossillarées) դրացի կը համարէր. Հէքէլ Առաջնեկերու (Protistes) մէջ կը դասէր զայն, Նէկէլի Հերմասուսնկ (Schizomycetes) կ'անուանէր: Քոհն Հերմասոյս (Schizophytes): Վերջապէս ոմանք Մանրաքոյս (microphile) կը կոչէին, եւ կային որ Մանրակենդանի կ'անուանէին: Քոհն 1872ին նոցա Ցուպիկ (bactérie) անուն տուաւ, եւ Սէտիյո 1878ին զայն Մանրե (microbe) անուանեց: Այս երկու անուանց տակ ճանչցուած են այժմ այս Մանրօրգաններն (micro-organismes, եւ Լոռեր (Algues) կը համարուին:

Կազմախօսութիւն եւ Բնախօսութիւն Մանրէից. — Մանրէներն միարջեան եւ բուսականաչ (chlorophyle) զուրկ լոռեր են: Այս բուսիկներն ցարդ ծանօթ էակաց՝ ամենէ փոքրերն են. եւ զորս 500-1500 անգամ մեծցընելով միայն կրնամք նշմարել, եւ հաւանակարար շատեր իրենք փոքրութեան աղաքաւ անտեսանելի կը մնան դեռ մեզ՝ մեր ներկայիս գորաւոր մանրացոյցներով:

Մանրէներն մերթ գնտածեւ եւ ճուռածեւ են, եւ գնճաւանրե (coccus) ու մանրագնիկ (micrococcus) կ'անուանին. եթէ սոքա երկու առ երկու կցուած մնան երկգնիկ (diplococcus) կ'ըսուին, եթէ համարքի հատերու նման շարուին՝ համարչաշար գնճաւանրե (streptococcus) կը կոչուին, իսկ եթէ խաղողի մը ողկոյցի հատերու նման խմբուին՝ ողկոյզաշար գնճաւանրե (staphylococcus) կ'անուանուին. երբ 8 առ 8 գտնուին սառսիկ անուն կը կրեն:

Ուրիշ ատեն մանրէներն կարճ գաւազանի ձեւն ունին՝ եւ խուպիկ (bactérie, bacile) կ'անուանին, երկար եւ ուղիղ թելերու նմաններն մագակետիկ (léptotrix) կ'ըսուին, երբ փոքր ոլոր մը գծեն ոլորածե (spirillum) կը կոչուին, երբ շատ մը պտուտակներ ընեն պսոսածե (spirochoetes) կ'անուանին, եւ վերջապէս ճիւղաւոր մանրե (cladotrix) կը կոչուին՝ ճիւղաւոր թելերն:

Մանրէներն նման այլ բջջաց կը բաղկանան քառատարրեան արարչահիւթէ (protoplasma) մը, եւ բջջանիւթէ (cellulose) պատեանէ մը՝ որոյ ներքին կողմն երբեմն քառատարրեան խաւ մ'ալ կայ: Մանրէից բաժանման ատեն միայն փոքր հունտեր կը տես-

նուի արարչահիւթի մէջ՝ որք միանալով կորիզ մը կը ձեւացնեն, եւ որ բաժանումէ վերջ կրկին կը լուծուի:

Գնտածեւ մանրէներն անշարժ են եւ կամ թրթռում մ'ունին: Գնտածեւ մանրէներն կը շարժին շնորհիւ իրենց թարթիչներու (cile), եւ գուցէ արարչահիւթի կծկմամբ: Մանրէներն իրենց հունտերու (spore) կազմութեան պահուն անշարժ են: Թթուածին, ջերմութիւնն եւ լոյս նպաստաւոր են մանրէից շարժմանց:

Մանրէներն կը շնչեն նման այլ ապրող էակաց, ոմանք օդի թթուածինն կ'ընդունին, այլք մարմնոց թթուածինն կը պահանջեն, զոր կ'ընդունին զայն տարրալուծելով. առաջիններն օդակեաց՝ իսկ երկրորդներն անօդակեաց կ'անուանին:

Մանրէից սնունդն ըստ իւրեանց տեսակի կը տարբերի. երբեմն խստապահանջ են: Մանրէներն շատ անգամ մարսողական խմորներ (diastas) կը պատրաստեն իրենց սննդեան ծառայող մարմիններն մարսելու համար:

Մանրէներն կ'արտաթորեն նաեւ մարմիններ՝ որք իրենց սննդեան յաւելուածներն ու մարմնոյ մաշած մասերն կրնան համարուիլ: Արտաթորեալ մարմիններն՝ կամ ալքալակերպներ (alcaloïdes) (որք սպիտասեր (leucomaines) կ'ըսուին երբ անմեղ են եւ դիաթոյն (ptomaine) թոյնասպիտ (toxalbumine) երբ թունաւոր են). եւ կամ սպիտային թունաւոր մարմիններ են, մարսողական խմորներու նման:

Կան մանրէներ որք գոյներ կ'արտադրեն:

Մանրէներն ընդլայնութեամբ բաժնուելով կը բազմանան, սորա կը պարտին իրենց հերմասուսնկ եւ հերմասոյս անուններն. սակայն երբ իրենց ապրած միջավայրի սննդեան տարրերն նուազին եւ կամ պակսին՝ հունտեր յառաջ կը բերեն, որք երկար ատեն զրկողութեանց կրնան տոկալ եւ ի պահանջել հարկին ծելով՝ կրկին ապրող մարմիններ կուտան:

Հունտի վիճակն քուն ըլլալու կը նմանի. կենսական բոլոր երեւոյթներն այդ վիճակին մէջ դանդաղ կ'ընթանան. բայց հիւանդութեանց մանրէներն իրենց հիւանդառիթ դերն հունտի վիճակին մէջ իսկ կը շարունակեն:

Մանրէներուն ամենէ նպաստաւոր ջեր-

մութիւնն 30° - 35° է: 0° էն վար ջերմութեան կրնան տակալ, նամանաւանդ հունտերն, սակայն չ'են աճիր. 60° - 70° ին կը մեռնին, կան հունտեր որք մինչ 125° ին կրնան դիմանալ:

Լոյսն եւ թթուածինն կը տկարացնեն մանրէներն եւ կրնան իսկ սպաննել զայնս: Աստի կը հետեւի թէ՛ առողջապահութեան տեսակետով որչափ կարեւոր են իրնակարանաց լուսաւորութիւնն եւ հովարումն: Հիւանդաւթ մանրէներն առատ թթուածնի ներգործութեամբ կը կորսնցնեն իրենց ժաշկաւորութիւնն եւ կը սպաննուին իսկ:

Հականեխիչ անուանեալ մարմիններն մանրէից թոյներն են: Սնդիկի աղերն, փեւնակիւն քրոն (acide phenique) եւ իւր ածանցներն ամենէն զօրաւորներ հականեխիչներն են:

Մանրէից ապրած միջավայրի հետեւանքներն են խմորումներն, նեխումներն, եւ փռութիւններն:

Խմորումներն մարմնոց պարզ ձեւով խութիւններն են, իսկ նեխումներն բազադրեալ խմորում մը՝ որ բազմաթիւ մանրէից եւ այլ ստորադաս բուսոց ու կենդանեաց ի մի վայր ապրելու հետեւանքն է: Նեխմամբ գործարանաւոր մարմինք կը տարրալուծին ու կը փոխն եւ գարշելի հոտեր կ'արձակեն:

Ըսինք արդէն թէ մանրէիէրէ ոմանք գոյներ կ'արտադրեն, այլք մարմիններ՝ որք օդի թթուածնի ազդեցութեամբ լոյս կուտան (լուսածնութիւն), այս դասակարգի մանրէից գործն է ծովու ջուրոց ու կենդանեաց՝ որպէս նաեւ մանրու եւ մասնաւոր սունկերու լուսածնութեան երեւոյթն: Ուրիշներ մարսիչ խմորներ կ'արտադրեն ի նպաստ իրենց սննդեան ծառայող մարմնոց մարսողութեան: Ըստ Տիւքսթի մեր մարսողական խողովակի մէջ կան մանրէներ որք իրենց արտադրած մարսախմորներով մեր մարսողութեան կը նպաստեն: Վերջապէս կան մանրէներ՝ որք իրենց արտադրած թոյներով (դիաթոյն ու թոյնասպիտ) բուսոց, կենդանեաց եւ մարդոց հիւանդութիւններ կը պատճառեն, եւ ահա այդ մանրէներն են որք յառաջ կը բերեն տարափոխիկ հիւանդութեանց մեծ մասը, ուստի եւ մանրէներն կ'անուանին խրմորիչ, նեխիչ, գոյհարսադրիչ, շուստու, մարսիչ եւ հիւանդաւոր:

Բնականաւոր Մանրէից. — Մանրէներն կը գտնուին օդի, հողի, եւ ջուրի մէջ: Նորպէս նաեւ ապրող մարմնոց վրան ու մէջն:

Օդի մէջ մանրէներն առատ են՝ բնակիչութեան մեծ կեդրոններու, քաղաքաց եւ նաւանաւանդ հիւանդանոցաց սրահներու մէջ, օդի ստորին խաւերն աւելի հարուստ են քան բարձրերն, 2000 մէթրէն վեր մանրէ չկայ: Ցամաքներէ հեռի ծովերն պատող օդն գրեթէ զուրկ է մանրէներէ:

Մանրէներն ամառն աւելի առատ են քան ձմեռն, առաւօտուն եւ երեկոյեան աւելի են քան գիշերն ու ցերեկն: անձրեւներն օդի մանրէներն կը նուազեցնեն:

Շնչառութեամբ օդի մանրէներն աւելի կը նուազին քան կ'աւելնան, զի թոքերու ներքին երեսն պատող բջիջներն կը լափեն անդ հասնող մանրէներն եւ արտաշնչեալ օդն մանրէ չ'պարունակիր:

Օդն շնորհիւ իւր թթուածնի ու լուծողի մանրէից ջնջման վայր մ'է:

Օդի մէջ կը գտնուին Թոքատապի (Pneumonie), Տապատոյ (Erysipèle), Ուռակաւնութեան (Tuberculose), մանրէներն, հաւանականաբար Հարսանիթի (Rougeole), Կարմրուկի (Scarlatine), Կապոյտ հազի մանրէներն օդի միջոցաւ կը վարակին:

Հարուստ եւ մշակութեամբ հովհարեալ հողերն աւելի յարմար վայրեր են մանրէից: Միեւնոյն պատճառներով հողի մանրէից քանակն դէպ ի խորերն կը նուազի, 5 մէթրէն վար գրեթէ մանրէ չկայ հողին մէջ: Հողն կը պարունակէ ի մէջ այլոց Ածխախտի (Charbon), եւ Կարկամութեան (Tétanos) մանրէներն: Զուրերն կը պարունակեն հողերէ եւ օդէ ընդունած մանրէներն:

Ակերու ջրերն զուրկ են մանրէներէ, աղտոտ ջրերն աւելի մանրէ կը պարունակեն: Սէն գետի ջուրն Փարիզէն ելած ատեն մէկ խոր, հարմէթրին մէջ 3200 մանրէ կը պարունակէ:

Ջրերն կը պարունակեն նամանաւանդ ժանտատենդի եւ Բոլերայի մանրէներն:

Ապրող մարմիններն՝ նամանաւանդ կենդանիք՝ մանրէից բոյներ են: Մարմնոյ հիւթերու (արիւն, աւել, մէզ, եւլն.) մէջ մանրէ չգտնուիր, ոչ ալ հիւսուածոց մէջ, այլ մորթի վրայ եւ անցքերու մէջ, եւ նամանաւանդ ի մարսողական խողովակի:

Մարդոց եւ կենդանեաց մանրէից մեծ մասն անմեղ սեղանակիցներ են, որոց եւ ու մանր մարսողական խմորի արտադրութեամբ մեր մարսողութեան իսկ կը նպաստեն (Տիւք-թո). կան եւ անդ հիւանդառիթ մանրէներ, որպէս Թոքատուտի գնտամանրէն (Pneumococcus) բերնի մէջ, եւ աղեաց սովորական ցուպիկն (Bactérium collicommunis) աղեաց մէջ, որք սպասու վիճակի մէջ կը մնան, եւ ի տկարանալ մարմնոյն (զրկողութեամբ, չափազանց յոգնութեամբ, չարքաշ կենօք, հիւանդութեամբ, վշտօք, եւլն.) կը սկսին գործել (1):

Մեակութիւն Մանրէից. — Որեւէ մանրէի յատկութիւններն ուսումնասիրելու համար՝ մասնաւորապէս պատրաստուած արհեստական հողերու վրայ կը ցանեն ու կը բուսցնեն զայն, որպէս կ'ընեն բարձր դասի բոյսերն դաշտերու մէջ:

Մշակութեան մարմին կ'ընտրեն հեղուկներ (մսի արգանակ, արեան շիճ, բուսոց խաշոյ, հանքային մարմնոց լուծոյթ, մէզ, կաթ)՝ հաստատուն մարմիններ (գետնախնձորի շերտեր), թանձրացեալ հալած մարմիններ (մածիտ) (gélatine), մասնիւթ (gélouse):

Որպէս զի մշակութիւն մը իրական արժէք ունենայ՝ կարեւոր է որ մշակութեան հողն եւ զայն պարուսկող ամաններն ուսումնասիրելի մանրէից ցանումէն առաջ՝ զուրկ ըլլան՝ մանրէներէ, ամլացեալ ըլլան. որպէս կ'ընեն: Ամլացեալ պէտք է եւ ըլլան ցանելու ծառայող գործիներն:

Գործիներն ու ամաններն հակաանխտկան լուծոյթներով կրնան ամլանալ, սակայն ընդհանրապէս ամլացման համար ջերմութիւնն կը գործածուի: Ջերմութեան կը դիմուի նաեւ մշակութեան նիւթերն ամլացնելու համար:

Մանրէներն 60° - 55° ջերմութեամբ կը ջնջուին, սակայն նոցա հունտերն սպաննելու համար 100° եւ նոյն իսկ մերթ աւելի ջեր-

մութիւն պէտք է: Ընդհանրապէս մասնաւոր ջերմոցներու միջոցաւ կը տաքցնեն ամլանալի մարմիններն ու անօթներն:

Մանր գործիքներն՝ որպէս սերմանելու տանդեր, դանակներ, եւլն. բոցի մէջէ անցընելով կ'ամլացնեն:

Սերմանելու ատեն մարմնոց տեղափոխութեան համար կը գործածեն ապակիէ գաւազաններու ծայրն հաստատեալ ասեղներ: Մեծ զգուշութիւն ընելու է, որպէսզի մանրէից տեղափոխութեան ատեն օտար մարմիններ չ'առնուին անոնց հետ:

Սերմանեալ հողերն ջերմութենէ զատ որեւէ խնամոց պէտք չ'ունին: Ջերմոցներու մէջ կը գնեն զայնս, սրահանջեալ ջերմութիւն տալով, 30°-40° ջերմութիւնն շատերուն նշպաստաւոր է:

Պատկերում. — Պատկերում կ'անուանի մանրէի մը ի կենդանի մշակութիւն, եւ որ այդ մանրէի կենդանեաց վրայ ունեցած ազդեցութիւնն մեզ ցոյց կուտայ:

Տարբալուծում Մանրէից. — Մանրէարաւ նստան տարբալուծում կ'անուանի որ եւ է մարմնոյ մէջ գտնուած մանրէներն որոնելու գործողութիւնն:

Իբր սկզբունք հարկ է՝ այդ մանրէներն իրարմէ զատել, եւ զայնս առանձինն մշակելով ուսումնասիրել:

Բնութիւն Մանրէից. — Մանրէից մշակութեան հեղուկներն եւ կամ մանրէ պարուսկող մարմնոց հիւթերն ուղղապէս մանրացոյցով կրնամք քննել, սակայն հաստատուն մարմնոց վրայի մշակութիւններն՝ ամլացեալ հեղուկներու եւ կամ զտեալ ջրերու մէջ լուծելով լուծոյթն կը քննեն: Իսկ գալով հիւսուածոց մէջ գտնուած մանրէից՝ հարկ է նախ այդ հիւսուածներն ըստ մանրազնական օրինաց նուրբ եւ թափանցիկ մասերու բաժնել՝ եւ այդ մասերն մանրացոյցով քննել:

(Շարունակելի)

ՏՕՔԹ. Ն. ՏԱՆԱԽԱՐԵԱՆ

(1) Աղեաց մէջ մանրէներէ զատ կան եւ այլ ստորագաս բուսեր եւ կենդանիներ, սոցա հունտերն ու ծուծերն. մեր կենդանութեան՝ մենք նոցա կ'իշխենք առանց անոնցմէ վնասուելու, բայց մեր մահու սեւ վերջ՝ անոնք կը սկսին աճիլ բազմանալ եւ գիշացել մեր մարմինն շնկեակցութեամբ օդէն հկած մանրէից, որպէս հեռակարիւն է նեխում, փռութիւն, եւ չարացում:

ԹԵՅԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

(Նախ. և երկրորդ 24)

Այլ եւս տերեւները կը սրտհին, անոնց մեծութեան եւ նրբութեան համեմատ կը դասաւորեն. որոնք կրկին առանձին առանձին կը չորցնեն մէկ քանի անգամներ, տեսակին ազնուութեան համաձայն, և հետզհետէ թեթեւ կրակի վրայ, մինչև որ տերեւները փոքր ճնշումի մը տակ կոտրային. Այս կերպով սե թէյի պատրաստութիւնը լրացած կ'ըլլայ:

Տեսնենք այժմ թէ ինչպէս կը պատրաստեն կանաչ թէյը:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԿԱՆԱՉ ԹԵՅԻ

Կանաչ թէյի պատրաստութիւնը բոլորովին կը տարբերի սիէն. բայց նախնական ձեռնաշխատութիւնները նոյնը ըլլալուն. հարկ չենք տեսներ հոս կրկնել:

Անգամ մը արեւու տաքութեան տակ չորցնելէ վերջ, թէյի տերեւները կը լեցնեն, 1¹/₂ մեթր երկայն և 1¹/₂ մեթր լայն դիմացկուն կտաւէ պարկերու մէջ, որոց բերանը կապելով կը գոցեն, և կ'սկսին ոտքերով բռնուցնելով կոխկռտել, զարնել և ճնշել, մինչեւ որ տերեւները իրենց ծաւալը պզտիկցնեն. Այն ատեն պարկերուն բերանը բանալով կը չարունակեն կոխկռտել և ճնշել, մինչեւ որ մէջի պարունակութիւնը քարի մը պէս կարծրանայ, և կը թողուն այդ վիճակի մէջ ամբողջ օր մը: Հետեւեալ օրը պարկերուն մէջէն տերեւի գունտերը հանելով, խնամով կը զատեն իրարմէ, եւ տա-

ռազաններու (սեյէ) մէջ լեցնելով, մաղմաղ կրակի վրայ կը խարկեն, մինչեւ որ կծկին և գալարին: Յետոյ պամպուէ կողմերու մէջ լեցնելով, 3-5 ամիս կը պահեն այսպէս, ուրկէ վերջը սե թէյի նման, մաղերու վրայ տարածելով կրկին կը խարկեն:

Այս գործողութենէն յետոյ կը լեցնեն տերեւները հողմասանի (ventilateur էջէկ մաֆինասը) մը մէջ, և մաղելով քանի մը տեսակի կը բաժնեն, որոց մէջէն ելած փոշին, թէյի ավենէն ստորին տեսակը կը կազմէ:

Այս կերպով մանրէլէն և զատելէն յետոյ վերջնական գործողութեան մ'ալ կ'ենթարկեն թէյի տերեւները: Նախ 3 մաս գածի՝ մէկ մաս լեղակ խառնելով, կը փոշիացնեն: Երկուք ու կէս քիլօ տերեւ կը կշռեն, և վերոյիշեալ փոշիէն թէյի դղալ մը խառնելով, կէս ժամու չափ ձեռքերով կը հոսեն, մինչեւ որ խառնուողը լաւ մը կատարուի: Ահա այս կերպով դժգոյն կանաչութիւն մը կը ստանան տերեւները, լեղակի ազդեցութեան տակ և գածի մէջ գտնուած կիրն ալ այդ գոյնը բնականի պէս կը հաստատէ անոնց վրայ, առանց սակայն թէյի բնական անուշահոտութիւնը աւելնել:

Կանաչ թէյերը տարիէ մ'առաջ չեն ծախեր. որպէս զի՝ այդ միջոցին մէջ իրենց տեսակ մը բուսային հոտը և տոխպ (պուրուշ քուրուճը) համը անցյալտանան:

Չինացիք սովորութիւն ունին իրենց գործածութեան համար պահած թէյերնուն մէջ, անուշաբոյր ձիթենիի ծաղիկներ խառնելու, ինչ որ երբէք արտածութեան սահմանուած թէյերուն մէջ չի գտնուիր: Եւ արդէն այս ձիթենիի ծաղիկները խիստ սուղ ծախուելուն, միայն թէյի ազնիւ տեսակներու մէջ կը խառնեն, որ ախորժեղի համ մը կուտան:

անոնց. Չինացիք երբէք իրենց թէյերը չաքարով չեն խմեր:

Թէյի յաօկութիւնները. — Թէյը գերեթէ սուրճին միեւնոյն յատկութիւնները ունի. իր բաղադրութեան մէջ գոնուած օսպաղը (թանէն. բերանը բոթող նիւթ) մարսածէս ստամոքսներու ուժը կը վերակենդանացնէ, և թէյիսը ջիւղերը կը կազդուրէ: Թէյը հանդարտեցուցիչ և յոգնութիւնը առնող յատկութիւն մ'ունի. բայց չափազանց գործածութեան մէջ թմրութիւն յառաջ կը բերէ, միշտ յարստասիրման բնամէջը (urée) կը նուազեցնէ, և մարմնոյ ջերմութեան աստիճանը վար կ'իջեցնէ: Նոյնպէս չափազանց գործածութիւնը դժուարամարսութիւն յառաջ կը բերէ իր մէջ պարունակած տոպաղով, Ափիոնէ և բուռային աքալակերպիներէ յառաջ եկած թունաւորումներու մէջ, օգտակար դեղթափ մ'է թէյը: Թեթեւ պատրաստութեամբ չափաւոր գործածութեան մէջ միշտ օգտակար ըմպելի մ'է, որ ուղեղի հանդարտութեան հետ մտքի արթնութիւն կուտայ:

Վերը յիշուած անպատեհութիւնները կ'անյայտանան, երբ կաթով կամ շաքարովով (ռօմ) խառն խմուի:

Թէյի մշակութիւնը հետզհետէ աշխարհիս ամեն կողմ կը տարածուի. փափաքելի է որ Թուրքիոյ յարմարագոյն վայրերուն մէջ ալ փորձուէր իր մշակութիւնը, որ երկրին համար նոր շահուողը մը բացուած կ'ըլլայ:

Փօռմօզա կղզիին մէջ թէյի մշակութիւնը հետզհետէ կը տարածուի և մասնաւորապէս այս կղզիին հիւսիսային կողմը Պան-Քաի և Թամ-Սուի շրջանակներու տնկարկութիւնները խիստ յաջող ելթալով, սքանչելի թէյ կ'արտադրեն: Գլխաւորապէս այս տնկարկումները կը կա-

տարուին, հին ատենները քափրենիներով (ֆեաճիւի) զարդարուած անտառներու հողերուն մէջ, որոնք միջին բարձրութեամբ բլուրներ են: Հարաւային կողմը գէպի թայվան, թէյենին աղէկ չ'յաջողիր. կլիման շատ տաք և շատ չոր ըլլալուն համար. մանաւանդ որ այս կողմի Չինացի թէյ մշակողները աղէկ ալ չեն խնամեր իրենց մշակութիւնները, և թէ պատրաստութիւնն ալ գէշ կերպով կատարելով, մինչև իսկ շատ անգամներ թէյի մէջ կը խառնեն փոշիներ, և իր պահպանութեան վնասակար նիւթեր: Չինական կառավարութիւնը սկսած է լրջօրէն զբաղիլ այս անպատեհութեանց առաջը առնելու համար, սր հետզհետէ օտար արտադրութեանց տեսակի ազնւութեան պատճառաւ խնդրանքները պակսելով, երկրին եկամուտները կը պակսին: Սրգէն, թէյ այս կղզիի մէջ՝ և թէյ ալլուր, Եւրոպական գաղութներ սկսած են տեղացիներու դէմ եռանդաւորին մրցիլ, թէյի մշակութեան և պատրաստութեան եղանակները հետզհետէ բարելաւելով:

Շարունակելի

Ղ. ԲՈՒՍ

ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

Դմակը պահելու եղանակ.

Եւրոպական կերակուրներու պատրաստութեանց մէջ, առ հասարակ կը գործածեն խոզի ճարպ: Մենք՝ Թուրքիացիքս այս ճարպը գործածելու սովորութիւնը չ'ունենալնուս համար, երբ եւրոպական կերակուրներու տեսակներ բացատրենք, շատերուն համար անմատչելի պիտի ըլլան անոնք. բայց որպէս

զի Հանրագիտակի բաժանորդները մեր գըրուածներէն օգտուին, եւ իրենց տանը մէջ փափաքած ատենին Եւրոպական համեղ կերակուրներ պատրաստեն, իրենց պիտի ցուցնենք միջոց մը. որ կատարելապէս խոզի ճարպի տեղը պիտի բռնէ :

Մենք ունինք զարմանալի կոշտած ոչխարի ցեղը, որու դմակը ինչպէս ամէնքդ ալ գիտէք, ամբողջովին ճարպի կոյտ մ'է, եւ կրնայ մրցիլ խոզի ճարպին հետ իր համովը, առէք ուղածնուդ չափ ոչխարի դմակ, մաքրեցէք. արիւնոս մասերը խնամով զտեցէք, եւ մէջտեղը գտնուած ոսկորը՝ իր բոլորտիքի մետրով մէկտեղ հանեցէք, մնացեալը 0,18 մեթր երկայն. 0,03 մեթր լայն, եւ 0,03 մեթր հաստ շերտերու բաժնեցէք, (տարակոյտ չ'կայ որ այս չափերը անհրաժեշտ չ'են, գաղափար մը տալու համար գրեցինք). մաքուր եւ պնդ ջուրի մէջ աղէկ մը լուացէք, չորցուցէք, եւ սեղանի մը վրայ իւրաքանչիւր կտորը աղով շփեցէք. (աղը չոր ըլլալու է. եթէ չոր չ'է, կրակի վրայ ամանի մը մէջ կրնաք չորցնել), յետոյ կամ քարիւղի թիւթեղէ սնտուկի մէջ, եւ կամ ուրիշ յարմար պղտիկ տակառի մը մէջ կարգաւ չարելու է. բայց առաջուց ամանին տակը աղ ցանելու է. ինչպէս եւ իւրաքանչիւր կարգ աղով ծածկելէ վերջը ուրիշ կարգ մը չարելու է, այնպէս որ, երբէք օդ չ'մնայ մէջտեղուանքը, Երբ ամանին մէջէն մէկ երկու կտոր առնէք գործածելու համար, մնացեալը կրկին աղէկ մը, աղով ծածկելու է. եթէ՛ զով եւ չոր տեղ մը պահէք. երկար ատեն կը դիմանայ :

Գործածելու համար, երբ ամանէն դուրս հանէք, անգամ մը՝ կր լուաք, որ աւելորդ աղերը երթան վրայէն, եւ յետոյ մանր ջարդելով. ձեր կերակուրներուն մէջ կը դնէք :

Այս կերպով պահուած դմակի ճարպը, կերակուրներու համար, հալած դմակի իւղէն աղէկ է, որովհետեւ այրածի եւ խաբխանի համ չ'ունենալով պարզ մսի համ կուտայ կերակուրին մէջ. ուստի՝ երբ ձեր տեղական կերակուրներու մէջ դմակ-իւղ դնելու պէտք ունենաք, կրնաք փոխանակ այդ դմակ իւղին, գործածել վերոյիշեալ դմակի ճարպը մանր ջարդելով :

Եզան եւ հորթի միսերը

Մեր մէջ սովորութիւն չ'կայ եզան եւ հոր-

թի միս ուտել, նա մանաւանդ ասոնց թոքերը, լեարդը, երիկամները եւայլն, որոցմով չատ համով, խնայողական եւ միեւնոյն ազամ սննդարար կերակուրներ կը պատրաստուին : Այս պատճառաւ ուղեցինք մերթնդ մերթ գրել անոնց պատրաստութեան վրայ : Փորձով կրնաք հաստատել մեր ըսածներուն ճշմարտութիւնը :

Հորթի լեարդի շամբում

(ճամնա քառս ձիյէր շիշ քեպպար)

Առէ՛ք հորթի մը լեարդը, խոշորկէկ քառակուսիներու վերածեցէք (գրեթէ 4 հար, մեթր կողմով). եւ այնչափ ալ միեւնոյն մեծութեամբ դմակ, որ պէտք է կէս հար. մեթր լայնութիւն ունենայ : Դրէ՛ք սանի մը մէջ, եւ աղ պղպեղ, քիչ մ'ալ մէկրնկոյդ, ազատքեղ եւ պղտիկ գլուխ մը սոխով համեմեցէք. (կրնաք սոխ՝ տեղ եշալօդ գործածել որ աւելի համով կ'ըլլայ) :

Տապակի (թալիս) մը մէջ դրէք դգալ մը կարագ, կամ դմակ իւղ, եւ 3-4 վայրկեանի չափ խորովեցէք, յետոյ վար առէք :

Ճաշէն մէկ քառորդ ժամ առաջ. շամբուրի (շիշ) վրայ անցուցէք լեարդի կտորները, իւրաքանչիւր անգամուն դմակի կտոր մ'անցունելով : Յետոյ ծեծած կաշեղափ մէջ թաթ-խեցէք եւ կասկարեցէք : Պնակի մը մէջ քաշեցէք, եւ հետեւեալ թացանով (սալցա) համեմեցէք :

Թացան

Կտոր մը կարագ դրէք պնակի մը մէջ, աւելցուցէք վրան, աղ, պղպեղ, պտղունց մը մէկրնկոյդի տաշուք, խիստ մանր ջարդուած ազատքեղ, գեղակարոս (ֆրէնկ մայսմնօսը, սեռֆեօյը), քիչ մ'ալ կոտեմ (թերե) եւ սլոտղունց մը անանուխ (մանե), բոլոր ասոնք պէտք է տրորել դգալով մը կարագին հետ, եւ խառնել հետը լեմօնի մը ջուրը ու հաւկըթի մը դեղնուցը, եւ այնչափ զարնելու է որ խիւսի (մանուկ) վերածուի :

Սմբուկի (փաթիլման) խորթիկ

Չորս-հինգ կամ աւելի սմբուկ առնելով, երկայնութեանը կիսեցէք, կուտերը հանեցէք, եւ դանակով ճեղքորտեցէք, առանց կեղուր ծակելու :

Իւրաքանչիւր սմբուկի համար, մէկ պճեղ սխտոր եւ ազատքեղ առնելով՝ խիստ մանր ջարդեցէք, եւ աղ պղպեղ, քիչ մ'ալ ձէթով միասին ցանեցէք սմբուկներուն վրայ: Յետոյ դրէք մի առ մի կասկարաի մը վրայ. (կեղեւը միշտ կրակին կողմը դարձած). խորովէն վերջ տաք տաք հրամցուցէք:

Համեղ եւ աժան կերակուր մը՝ որ եթէ անգամ մը փորձէք շատ գոհ պիտի մնաք. եթէ դիւրութիւն ունենաք փուռի մէջ եփել տալու, ալ աւելի աղէկ կըլլայ:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. ՊԱՏՐԻԱՐԿ Հայրը Բշ, Կայս. Պալատ զնաց հետն ունենալով Ս. գործակատար Տիգրան էֆ, Տ. Ներսէսեան ու տեսակցեցու Ս. Քարաուղար Թահսին պէյի հետ:

Վեհ. ՍՈՒԼԹԱՆԸ՝ Իր զահակալութեան տարեդարձին առթիւ՝ իրատէ մը հանած է որով կը հրամայէ յաւելում մը ընել Ազգ. Հիւանդանոցի օրական պարէնին վրայ:

ԱԶԳ. ՀԻՒՍՆԴԱՆՈՅԻ Հոգաբարձութիւնը որոշած է բժշկական քննութիւն մը կատարել Հիւանդանոցի ամէն յարկերուն մէջ շարաթը մէկ անգամ կանոնաւորապէս: Կ'ըսուի թէ քննիչ կարգւած է Տօթ. Վահրամ էֆ. Թորգոմեան, որ յաճն առած է այդ պաշտօնը:

ԱՐՄԱՃԻ Դպրեւանքի բարձր. կարգի 18 աշակերտներէն վեցը առաջիկայ կիւ-

րակէ օր սարկաւագ պիտի ձեռնադրուին: Ս. Պատրիարք Հայրը իր կողմէ թաւիշէ ուրախներ պատրաստել տուած է:

Չորեքշաբթի առտու ժամը 3¹/₂ ին Մայր. Եկեղեցիի մէջ դոհաբանական աղօթքներ ու բարեմաղթութիւններ կատարուեցան Վեհ. Սուլթանին դահակալութեան տարեդարձին առթիւ: Ներկայ էին պաշտօնական մարմիններն ու հայ անձնաւորութիւններ:

Կարգ մը հայ գործաւորներ Ս. Պատրիարք Հօր դիմելով խնդրած են Հիւանդանոցի մէջ աշխատիլ յոյն գործաւորներու տեղ եւ անոնցմէ աւելի վար օրականով:

Ս. Պատրիարք Հայրը իր հետն ունենալով Ս. Գործակատար Տիգրան էֆէնտի Տ. Ներսէսեան, Կայս. Պալատ զնաց չորեքշաբթի օր եւ Գահակալութեան առթիւ պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու:

Չորեքշաբթի օր Բարձր. Աբրահամ փաշա ճեպընթացով մայրաքաղաքս ժամանեց եւ ուղղակի Կայս. Պալատ զնաց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անաստուրի երկաթուղիներու Վարչ. Խորհուրդին նախագահ Պ. Չանտէր մեծնաշնորհ խնդրեց Կ. Պօլսի մէջ ելեքտրական ուժ արտադրող գործարան մը հաստատել եւ մայրաքաղաքը ելեքտրականութեամբ լուսաւարել: Պ. Չանտէր խնդրեց որ այդ մեծնաշնորհը գաւառներու մէջ ալ ի գործ դնելու իրաւունք ունենայ:

Ուրբաթ օր նաւարշաւը հաստատու-

ուեցաւ Մեծ. Կղզիին առջև : Ա. Բ. Գ. մրցումները կատարեցին Մեծ-Կղզիի Բլիւպիին մակոյկները. շահողներն եղան Քոչօ, Քօրանաքի և Մարշալ : Դը կատարեցին Թէրսանէի մակոյկները. Ա. մրցանակը շահեցաւ ԹէշրիՔիէի շոգե-նաւակին մակոյկը : Ա. ը շահեցաւ Անգլիականը. Բ. ը Աւստրիականը :

Ռէժիի Ընդհ. Վարչութեան Ա. Թարգման Իճատճեան Գրիգոր Էֆէնտիի Սալիսէի աստիճան շնորհուեցաւ :

Գաւառներու մէջ գտնուած բանտե-րուն և բանտարկեալներուն վիճակադ-րութիւնը կը պատրաստուի :

Իզմիրի օտար ապրանքներու մաքսա-տունը հրդեհ ծագելով ամբողջ մթերա-նոցները ապրանքներով մէկ անդ այրեր են, Քսան հազար ոսկիէն աւելի փաս-կայ :

Մուսուլի մէջ սովը բաւական մեծ համեմատութիւններ առած է :

Եւրոպայի հրապարակներու վրայ շա-փարին գինը բարձրացաւ :

Սանիէի Բ. աստիճան տրուեցաւ Ա. Ճատուլի երկաթուղիներու առեւտրա-կան գործերն առաջին պաշտօնեայ Ա. Ղասեան Էֆ. ի :

Ելմտական նախարար անուանուեցաւ նոյն նախարարութեան հաշուակալը Բէ-շատ Պէյ :

Մեծ հրդեհ մը երեքշաբթի գիշեր

մոխիր գարձուց Պէշիւք Տէրէի մեծագոյն մասը : Այրած տուներուն թիւը 300-400 կը հաշուի : Շէնքերուն մեծ մասը ապա-հովագրուած չէր :

Պուլկարիոյ Իշխանը Ալեքսանդր պատուանշանի Ա. աստիճանը տուաւ Մեծ-Եպարքոսին որդի Ճավիտ Պէյի և Պետ. Խորհրդին անգամ Նիսազի Պէյի :

Հռոգոսի մէջ Երեքշաբթի օր երկ-րաշարժի բուռն ցնցումներ զգացուեր են :

Պոլսոյ Մեծ-Շուկային նորոգութիւնը աւարտեցաւ : 38,000 քառկ. մեթրի վը-րայ շէնքերու կէսէն աւելի նորէն շին-ուեցան և մնացածները նորոգուեցան :

Թրամուէի ընկերութիւնը Կայս. կա-ռավարութենէն արտօնութիւն խնդրած է Թրամուէի կառքերը ելեքտրականու-թեամբ քաշելու և չորր գիծ շինելու պարտաւորիչ կերպով, այդ գիծերն են Շիշլիէն Թաթաւլա, Կալաթա-Սարայէն Թիւնէլի հրապարակը, Էմին Էօնիւէն Է-յուպ և Սուլթան-Պայազիտէն Էտիրնէ-Դտրու :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Միացեալ Նահանգներ եւ Սպանիա. — Հաշտութեան յանձնաժողովին Ամե-րիկեան պատուիրակները անուանուեցան. կըսուի թէ մեծամասնութիւնը պիտի պահանջէ Ամեր. թեւարկութիւն մը հաստատել Փիլիպեաններուն վրայ, ուր ապստամբութիւնը հետզհետէ կը տա-րածուի :

Անգղիա եւ Ռուսիա. — Անգլիոյ և Ռուսիոյ յարաբերութիւնները ձգտուած են, որովհետեւ Չինական կառավարութիւնը տեսակ մը թշնամական վարմունք բռնեց է Անգլիոյ նկատմամբ Բէքին Շանքաուի երկաթուղիի շինութեան մէջ։ Անգլիա դոհացում կ'ուզէ եթէ ոչ կը սպառնայ զէնքի ուժով ձեռք ձգել իր պահանջումները։ Սակայն Ռուսիա լռիկ մնջիկ կը շինէ իր անդրսիպերեան երկաթուղին, որ աւարտելու մօտ է, և որ Սիպերիան պիտի բանայ Եւրոպ. վաճառականութեան առջեւ ու Եւրոպան Չինու մօտեցնելով պիտի դիւրացնէ Ռուսիոյ զին. փոխադրութիւնները։

Վերջին լուրերուն նայելով Ռուսիոյ և Անգլիոյ ձգտումը պատերազմ առաջ բերելու աստիճան ծանր չէ և կը յուսացուի թէ խաղաղութեամբ կը վերջանայ խնդիրը։

Ձէնրնկեցութիւն. — Ռուսիոյ պաշտօնաթերթը կը ծանուցանէ թէ Չարին հրամանով Մուրավիէվ Կոմսը օտար քաղաքագէտներու զեկոյց մը յանձնել է. որուն մէջ դիտել տուած է տէրութեանց ըրած ահադին ծախքերը սպառազինութեանց համար, որոնք ժողովրդին աղքատութեան պատճառ կ'ըլլան։ Այդ զեկոյցին մէջ ըսուած է թէ քրոյր տէրութեանց գերագոյն պարտն է սահման մը դնել սպառազինումներուն և ազէտքներու բարձման միջոցներուն հետապնդել։ Ռուս կառավարութիւնը ամենէն յարմար միջոցը ներկայ ժամանակը կը նկատէ միջազգային բանակցութիւն մը կատարելու։

Չարը հրամայեց Արաաքին Նախարարին որպէս զի Բեդրսպուրիկի մէջ գտնուող

օտար տէրութեանց գետնաններուն առաջարկէ գետնանախարհուրդ մը գումարել, որ զէնքնկէցութեան խնդրով պիտի զբաղի։ Երանի թէ այս զէնքնկէցութեան առաջարկը պղատոնական բան մը չ'ըլլայ առջիններուն պէս։

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԺԱ.

Երեւոսեայ գնտակ մը կայ որոյ տըրամագիծն է 0,1 մէթր. կ'ուզեմք մեղրամոմով պատել, այնպէս որ հաւասար ծաւալով ջուրի ծանրութիւն ունենայ. պատուած մեղրամոմի խաւը ինչ թանձրութիւն ունենալու է. երեւոսի տեսակարար ծանրութիւնն է 1,33, մեղրամոմինը՝ 0,96։

Տ. ՊՕՋԱՃԵԱՆ

Չ. ԽՆԴԻՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Չ. Խնդիրը խիստ կանոնաւոր եւ դոհացուցիչ կերպով լուծեր են հետեւեալք։

Թարութիւն էՓ. Գաբամաճեան ի Ռուս. ճուբ, Պր. Երուանդ Մ. Տէօյիւճեան, աչակերտ Վիեննական Միթիթարեան վարժարանին ի Բանկալթի, Պր. Պետրոս Ս. Արիկեան, աչակերտ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ուսումնաբանի։

Դիցուք թէ նոյն թուոյն հարիւրաւորն լինի x, տասնաւորը՝ y, եւ միաւորը՝ z.

Խնդրոյն պայմանաց համեմատ կ'ունենանք յետագայ երեք հաւասարութիւնքը։

$$100x + 10y + z = (x + y + z) 21 \dots (1)$$

$$10y + z = 26x \dots (2)$$

$$100z + 10y + x - (100x + 10y + z) = 495 \dots (3)$$

Այս հաւասարութեանց գործողութիւններն եւ պարզողութիւններն ընելով կ'ունենանք .

$$79x - 11y - 20z = 0 \dots\dots\dots (4)$$

$$26x - 10y - z = 0 \dots\dots\dots (5)$$

$$-x + z = 5 \dots\dots\dots (6)$$

(4) եւ (5) հաւասարութեանց մէջէն ջը անհետացնել ուզելով (4) հաւասարութեան ամեն անդամներն 10ով, եւ (5) հաւասարութեան անդամներն 11ով բազմապատկեմք եւ բարձումն ընելով կը գտնեմք

$$504x - 189z = 0 \dots\dots\dots (7)$$

Այս (7) հաւասարութիւնը առնեմք (6) հաւասարութեան հետ եւ անոնց մէջէն xը անհետացնել ուզելով (6) հաւասարութեան անդամներն 504ով բազմապատկեմք եւ վերածումն ընենք՝ պիտի գտնենք .

$$z = 8.$$

Արդ այս z-ի արժէքն՝ 8՝ (6) հասասարութեան մէջ իր տեղն դնելով կ'ենէնք .

$$-x + 8 = 5 \text{ կամ } x = 3.$$

Հիմա ունինք x-ի եւ z-ի արժէքներն զորս փոխադրենք (5) հաւասարութեան մէջ իրենց տեղերն, կ'ունենանք.

$$26 \times 3 - 10y - 8 = 0$$

$$\text{եւ } -10y = -78 + 8$$

$$\text{վերջապէս } y = 7.$$

Արդ թուոյն հարիւրաւորն է 3, տասնաւորն է 7, միաւորն է 8. ուրեմն թիւն է 378:

Պատ. 378:



ԲԱՌԱՐԱՆ

ՄԻԱՄՏՕՐԷՆ ԲԱՅԱՏՐՈՒԱԾ

Բարերար — Առանց շահու անկարելի է:

Բարի — Այն մարդը՝ որուն գործած չարիքը երեսան չ'եղեր:

Բարձրագոյն — Անկէ ալ վերը կրնայ ըլլալ:

Բարձրանալ — Իյնալու նշան է:

Բարոյագիտութիւն — Դպրոցներէ վերցուած բան:

Բարոյական — Ունեցողը կը փնտռուի:

Բացառութիւն — Ընդհ. կանոն:

Բեռ — Ամարանոց գացողներուն ձեռքը ամէն երեկոյ կը տեսնուի:

Բժիշկ — Աչքդ գոցէ բռնէ:

Բնագիտութիւն — Իմա՝ իրագիտութիւն:

Բնաւորութիւն — Գովելի կրնայ ըլլալ, եթէ գրականը լեցուն է:

Բուրաստան — Օրիորդաց գլխարկը:

Գ.

Գաղտնիք — Ձիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի:

Գանգատ — Բան մը որ միայն ծնողը կ'ուղղեն վարժապետաց:

Գանձ — Թաղական աղայութիւն: (բացառութիւնը միշտ յարգելի):

Գարեջուր — Ազնուականացեալ օգի:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՏԱԲԱԶԱՐ. Սափրիչեան էֆ. — Սացանգ Բիւզանդիոնի խմբագրատունէն Անգ. քղբադրամ, շնորհակալութիւն:

ՌՈՏՈՍԹՕ. Մ. Կ. Մալաքեան — Ձեր մասկին կ'սպասենք, կը յուսանք քե Գործակալի խնդիրը կարգադրելու չեմ մոռցած:

ՄԱՂՆԻՍԱ. Գեղամ Կ. Ունեան — Նամակնիդ սացանգ. կը ցաւիմ որ ուրիշ մէկ քանիներու պէս Ձեր քերթերն ալ չ'են դրկուած Մենք մտադիր էինք քեւ չի վնասող բաժանորդներուն քերթ չը դրկել, բայց մեր գործակատ Գ. Վարազդաս խնայողասիրութեան պատճառաւ վնասողներուն ալ չ'ե դրկած: Ընդհուպ կ'ընդունիք Ձեր պակաս քիւնքը. Ձեր հարցումներուն ալ պատասխանուած է:

ԱՐՏՕՆԱՑԻՐ
ԱՐՄԷՆ. ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՈՐԵՍՆՈՐՈՐԵՍԵՐԵՐ

ՉԻՆԱՍԱՆԻ, ՀԻՆԿԱՍԱՆԻ, ՃՈՎԱԾԻ,
ՀՈՆԻՔ-ՔՕՆԿԻ ԵՒ ՄԷՏԼԱՆԻ



ՄՈՐԵԿԵ ԱՅՆԻ ԵՒ ՔԱՄՄ ՔՖՅԵՐԻ
ՀՈՍ ԿԸ ԵԱՊՈՒԻՆ

Կ'ուզե՞ք ածան, համով հոսով եւ անխաւ-
թախ թէյ խմել. դիմեցե՛ք ուղղակի

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

վաճառատուներ, ձեկալ Պէյ խանի դրան կից,
թիւ 10. ուր ամեն նաւակի յարմար, մասնա-
ւորապէս գեղակեօք տուփերու մէջ բնօրինակ
պատրաստուած թէյեր կը գտնուին:

Այս վաճառատուներ 20 տարիներէ ի վեր
հաստատուած, միշտ իր յաճախողները գոհա-
ցուցած է, եւ ունի Օսմ. Տերութեան բոլոր
գաւառները, իր ներկայացուցիչները:

Գաւառներու յանձնարարութիւնները փու-
թով եւ խնամով կը կատարուին:

Վաճառանքիցն կեղծերէն զգուշացե՛ք, եւ
փնտռեցե՛ք միշտ ԵԱՎՐՈՒԼԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
ստորագրութիւնը:

Թէ առաւօտեան Սրբազան երգեցո-
ղութիւնը եւ թէ ի դէմս Ս. Պատարագի
երգեցողութիւնը հրատարակուած են,
փոքրիկ դպիրներու համար: Գինը 20 փր

ՄԻԱԼ Ե ԸՍԵԼ

թէ՛ Պօզանեան Էճէնքի ԴԱՍԱԳԻՐՔ
ԹՈՒՍԳԻՏՈՒԹԵԱՆ անուն գիրքը
ալ չի գտնուիր:

ՆՈՐ ՏՊՈՒԵՑԱԻ

հազարաւոր օրինակներ

Հարցուցէ՛ք Կ.Պօլիս, Մարգարեան պրա-
տուն եւ ուղեցէ՛ք:

Դասագիրք Թուագիտութեան

ի պէտս նախակրթարանաց

Տ. ՊՕԶԱՃԵԱՆԻ

Գինը 5 դրու



ՄԵՆ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐԱԷ

Կ. Պոլիս Գնահիշեան խանի տակ թիւ 3
Սոյն վաճառատուն պատրաստ է մատա-
կարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝
ամէն տեսակ թարմ՝ դեղօրայք. վիրա-
բուժական գործիքներ, Անգլիական եւ
Գաղղ. պատրաստ դեղեր, դօնեակներ,
գինիներ եւ հանքային ջուրերու մեծ
մթերք մը, յարմար գներով: Լ. Արսլան-
եան եւ Ս. Էմիրաէ Ընկերութիւնը երկար
առէն անձնական փորձառութիւններ
ունին: Ամեն ջանք եւ աշխատութիւն չեն
խնայեր իրենց յաճախողներն գոհաց-
նելու համար, մասնաւոր ուշադրութիւն
կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց
կը զրկեն դեղօրայք, ամենայն արա-
գութեամբ, թարմ եւ մատչելի գներով:
Չարաճի մուկներու եւ լուերու ելն.
համար միջատապան փոշի Poudre in-
secticide մեծաքանակ բերել տուած են
ուղղակի ծալմացիայէն, որուն համար
մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւի-
րենք յարգոյ հասարակութեան:

Վճարող Բաժանորդաց հասցեները պիտի տրուին գոհնե-
րուն վրայ. ուստի հաճեցէ՛ք Ձեր բաժնեգիւնը կանխիկ դրկել,
եւ հասցեանիդ ճշդիւ խնայեցէ՛ք մեզ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեզ բաժնեգին կամ քերթի
գին պարտք ունեցողներէն Ա-
նՈՒՆՈՎ՝ պիտի պահանջենք եւ
եւ միշտ պիտի պահանջենք, եթե
մօտեւ չստանանք մեր բաժա-
նորդներէն:

ՄԵՐ ԹԵՐԹԸ ՍՏԱՑՈՂՆԵՐՈՒՆ

Ճարդ մէկ դրշ. չե՛ք վճարած.
Բաժնեգիւնն կանխիկ դրկեցէ՛ք
եւ կամ ստացած ամբողջ քե-
րթը մեզ վերադարձուցէ՛ք:

ԱՌ ԲԱԺԱՆՈՐԴԱ

Հաճեցէ՛ք յառաջիկայ վեցամսեան կանխիկ դրկել:

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Այնթապ — Դարեգին էֆ. Պողարեան
Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիր — Յ. Պ. էֆ. Մանուէլեան
Գուրս-Պէլին Արժ. Տ. Ստեփան քահանայ
Մկրեան.

Գահիրէ — Մ. Պ. էֆ. Ս. Նաթանեան
Էրզրում — Եղ. էֆ. Տ. Աղարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճանեան
Իզմիս — Արրահամ էֆ. Կտաճեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէչիչեան

Կիլիպոլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Կիրասուն. — Արմենակ էֆ. Սոմունճեան
Մարաշ — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
Վարժապետեան

Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Մուշ. — Դեղամ էֆ. Տ. Կարապետեան
Պանսրմա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Պարսիզակ. — Վահան էֆ. Զիկունի
Պրուսա. — Օննիկ էֆ. Լուծֆեան
Սամսոն. — Կարապետ էֆ. Սէֆէրեան
Սրվազ. — Յ. էֆ. Գարակէօզեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքճեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մազրի-Դիւղ, Պողոս էֆ. Ազնաւորեանի խանութը,
Դատը-Դիւղ, Լեւոն էֆ. Զպուքճեան Դեղարանը,
Բերա, Մեծ փողոց Գառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: